ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.20

Ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-05/25»

ք.Երևան «20» փետրվարի 2025թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրենի ժ/պ Վ. Չիլինգարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Ա.Մկրտչյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Շարժիչներով փոխադրամիջոցների ԿԱՍԿՈ տեսակի ապահովագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1 683 000 (մեկ միլիոն վեց հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ: Կատարողը ԱԱՀ վճարող չի հանդիսանում:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, քսան բանկային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը.

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Ջվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրենի ժ/պ

_____________Վ.Չիֆչյան
(ստորագրություն) Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62շ., տար. 93 93/1
«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24100024283401
ՀՎՀՀ 02706942
Գործադիր տնօրեն

_____________Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« 20 » փետրվարի 2025թ. կնքված
N 2.20 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափ. միավ.	Ընդհանուր քանակը	Մատուցման		
					Հասցեն	Քան.	Ժամկետը
66511180/2	Շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայություններ	S/Մ մակնիշը՝ Mazda 6 025ZZ55. Շարժիչի հզորությունը 143/194 ձիաուժ, 2021թ.-ի արտադրության Նստատեղերի քանակը 5. Վազքը՝15942. Վիճակն անթերի	հատ	1	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ք. Երևան, Ի.Գասպարյան 33	1	22.03.2025-ից մինչև 23.03.2026թ.-ը ներառյալ երկու նշված օրը
		S/Մ մակնիշը՝ NISSAN LEAF 025TT55,025PP55,025HH55 Շարժիչի հզորությունը 110/150ԿՎՏ ձիաուժ. 2019թ.-ի արտադրության, Նստատեղերի քանակը 5 Վազքը՝ 6812 -71Վիճակն անթերի	հատ	3	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ք. Երևան, Ի.Գասպարյան 33	3	22.03.2025-ից մինչև 23.03.2026թ.-ը ներառյալ երկու նշված օրը
		S/Մ մակնիշը՝ Renault Captur 230AR61 Շարժիչի հզորությունը 84/114 ձիաուժ 2019թ.-ի արտադրության. Նստատեղերի քանակը 5 Վազքը՝ 30844,Վիճակն անթերի	հատ	1	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ք. Երևան, Ի.Գասպարյան 33	1	22.03.2025-ից մինչև 23.03.2026թ.-ը ներառյալ երկու նշված օրը
		S/Մ մակնիշը՝ Mitsubishi L 200 268AR61, Շարժիչի հզորությունը 94/128ձիաուժ. 2019թ.-ի արտադրության Նստատեղերի քանակը 5 Վազքը՝15249,12308.Վիճակն անթերի	հատ	2	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ք. Երևան, Ի.Գասպարյան 33	2	22.03.2025-ից մինչև 23.03.2026թ.-ը ներառյալ երկու նշված օրը

		S/Մ մակնիշը՝ Jac T 8 777AA47 Շարժիչի հզորությունը 102/139 ձիաուժ. 2020թ.-ի արտադրության. Նստատեղերի քանակը 5 Վազքը՝28531,Վիճակն անթերի	հատ	1	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ք. Երևան, Ի.Գասպարյան 33	1	22.03.2025-ից մինչև 23.03.2026թ.-ը ներառյալ երկու նշված օրը
		S/Մ մակնիշը Foton Tunland G7 Շարժիչի հզորությունը 120/163 ձիաուժ. 2024թ.-ի արտադրության, Նստատեղերի քանակը 5 Վազքը՝9600, Վիճակն անթերի	հատ	1	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ք. Երևան, Ի.Գասպարյան 33	1	22.03.2025-ից մինչև 23.03.2026թ.-ը ներառյալ երկու նշված օրը

Չհատուցվող գումար պետք է չլինի:

ԿԱՍԿՈՆ պետք է վճարի պայմանագրով նախատեսվածը նույնիսկ եթե

1. Ճանապարհատրանսպորտային պատահարից (ՃՏՊ)
2. Անշարժ կամ շարժվող առարկաներից (կառույցներ, խոչընդոտներ, կենդանիներ, թռչուններ) վրաերթ (բախում)
3. Ավտոմեքենայի շրջումից
4. Մեքենայի վրա ինչ-որ առարկաների ընկնումից (ծառեր, ձյուն, սառույց և այլն)
5. Դիմացից ընթացող ավտոմեքենայի անիվների տակից մանրախճի, քարերի և այլ առարկաների նետում և
6. հաջորդող վնասվածքներից եթե անգամ չգիտես, ինչ մեքենայի տակից է մանրախճի, քարերի և այլ առարկաների նետում եղել
7. Մեքենայի ջրի մեջ ընկնելուց
8. Սառույցի տակ ընկնելուց
9. Տարերային աղետից, երկրաշարժից
10. Հրդեհից (այդ թվում նաև ՃՏՊ-ի արդյունքում)
11. Պայթյունից
12. Երրորդ անձանց կողմից հակաիրավական գործողություններից
13. գտնվող իրերին կամ սարքավորումներին

14. ուժեղ կարկուտը կոխկրտել է շարժիչի ծածկոցը և տանիքը
15. կայանատեղում մեքենան քերծել է ուրիշ մեքենա
16. մեքենան նկարազարդել են փողոցային խուլիգանները
17. հայելիների վնասվածքները

ԿԱՍԿՈ-ն պետք է նաև պաշտպանի գողության, կողոպուտի և ավազակության արդյունքում մեքենայի և լրացուցիչ սարքավորումների կորստի ռիսկից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	«Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Ի.Գասպարյան 33	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62շ., տար. 93-93/1
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	«Յունիբանկ» ԲԲԸ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ	Հ/Հ 24100024283401
ՀՎՀՀ 01216144	ՀՎՀՀ 02706942
Գլխավոր տնօրենի ժ/ա	**Գործադիր տնօրեն**
_____ **Ա.Զիլինգարյան**	_____ **Ա. Մկրտչյան**
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1.1
« 20 » փետրվարի 2025թ. կնքված
N 2.20 պայմանագրի

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պատկանող և ԿԱՍԿՈ ապահովագրման ենթակա տրանսպորտային միջոցների

N	Տ/Մ մակնիշը	Տ/Մ պետ. համարանիշ	Տ/Մ տիպը տեսակը	Թողարկման տարեթիվ	Շարժիչի հզորությունը (ձիաուժ)	Տ/Մ ապվճարը (ՀՀ դրամ)
1	Mazda 6	02ZZ55	Մարդատար	2021	143/194	187 000
2	NISSAN LEAF	025TT55	Մարդատար	2019	110/150ԿՎՏ	136 000
3	NISSAN LEAF	025HH55	Մարդատար	2019	110/150ԿՎՏ	136 000
4	NISSAN LEAF	025PP55	Մարդատար	2019	110/150ԿՎՏ	136 000
5	RENAULT CAPTUR	230 AR 61	Մարդատար	2019	84/114	136 000
6	MITSUBISHI L 200	268 AR 61	Բեռնամարդատար	2019	94/128	221 000
7	JAc T8	777AA47	Բեռնամարդատար	2020	102/139	255 000
8	MITSUBISHI L 200	269 AR 61	Բեռնամարդատար	2019	94/128	221 000
9	Foton Tunland G7	701DE61	Բեռնամարդատար	2024	120/163	255 000
Ընդամենը						**1 683 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրենի ժ/պ

_____ **Վ. Չիլինգարյան**
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62շ., տար. 93-93/1
«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24100024283401
ՀՎՀՀ 02706942
Գործադիր տնօրեն

_____ **Ա. Մկրտչյան**
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
« 20 » փետրվարի 2025թ. կնքված
N 2.20 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	66511180/2	Շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայություններ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	միաժամանակ	**Ոչ ավել քան 1 683 000**

՝ *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ.
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրենի ժ/պ

_____Վ.Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62շ., տար. 93-93/1
«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24100024283401
ՀՎՀՀ 02706942
Գործադիր տնօրեն

_____Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 3
« 20 » փետրվարի 2025թ. կնքված
N 2.20 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 20 » փետրվարի 2025թ. կնքված
N 2.20 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (միաստիճան)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն